ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ԳՈՀԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի տիկին Վարդանյան

Հայտնում եմ Ձեզ, որ 2025թ. հունվարի 10-ից մինչև 2025թ. ապրիլի 10-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1) իրականացրել եմ սննդի շղթայի փուլերում նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության աշխատանքները.
2) իրականացրել եմ սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության բնագավառում Տեսչական մարմնի կողմից կատարվող պետական վերահսկողության պլանավորման և համակարգման աշխատանքները.
3) իրականացրել եմ պետական վերահսկողության արդյունքերի և ընթացիկ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հաշվետվությունների և այլ ձևաթղթերի մշակման աշխատանքները.
4) իրականացրել եմ Տեսչական մարմնի Երևանի և մարզային կենտրոնների կողմից իրականացված վերահսկողության արդյունքում ստացված տեղեկատվության ուսումնասիրության, ամփոփման, ընթացիկ հսկողության, մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները.
5) իրականացրել եմ սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության բնագավառում կատարվող աշխատանքների արդյունավետ իրականացմանն ուղղված հանձնարարականների, առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

6) իրականացրել եմ սննդամթերքի արտադրության փուլում վտանգի աղբյուրի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման վերաբերյալ սննդի շղթայի օպերատորներին խորհրդատվության տրամադրման աշխատանքները.
7) իրականացրել եմ սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության բնագավառներում միջազգային և տարածաշրջանային համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքները.
8) իրականացրել եմ մոնիթորինգային ծրագրերի նախագծման և իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
9) իրականացրել եմ սննդամթերքի անվտանգության բնագավառում Տեսչական մարմնի քաղաքականության, նպատակների և խնդիրների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
10) իրականացրել եմ սննդամթերքի անվտանգության բնագավառում Տեսչական մարմնի վերահսկողության մոնիթորինգային գործունեության արդյունքների ամփոփման, վերլուծության, խնդիրների և բացերի վերհանման աշխատանքները.
11) իրականացրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարությունից, նախարարություններից և այլ մարմիններից, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովից ստացված օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրման աշխատանքները.
12) իրականացրել եմ Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների հետ համագործակցության աշխատանքները.
13) մասնակցել եմ վտանգավոր սննդամթերքի ոչնչացման կամ օգտահանման գործընթացների իրականացմանը.

14) մասնակցել եմ սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.

15) մասնակցել եմ Տեսչական մարմնի կողմից վարվող էլեկտրոնային տեղեկատվական բազաների վարման աշխատանքներին.

16) մասնակցել եմ սննդամթերքի անվտանգության բնագավառում Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին

17) մասնակցել եմ մոնիթորինգային ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգմանը:

Սննդամթերքի անվտանգության
տեսչական մարմնի
սննդամթերքի անվտանգության
վարչության փորձագետ՝ Անահիտ Չիրքինյան

9 ապրիլի 2025թ.